

րեալ լասաց,- եւ պատգամաբերն շնորհելով Քրիստոսի ողջ է, եւ այրն ոչ ինչ թեթեւ,- եթէ «Ես եւ տեսանել² իսկ չիշխեմ զքեզ առ երկիւղի. դու ասես, եթէ զամ բժշկեմ³, եւ կամ թաղեա. ⁴մի՛ գուցէ զգացեալ ուրուք՝ եւ զիս ընդ քեզ թաղիցէ»:

133 Ո՞ր աներկիւղութիւն⁵ քաջ հովուի է. ո՞ր հոգողութիւն արդար ուսուցչի. ո՞ր քրիստոսանմանութիւն առողջ հայրապետի⁶: 134 Արարածոց արարիչն⁷ յաղագս մեղաւորաց գիւտի մարդ եղել. բազում թշնամանաց համբերեաց, կոփանաց եւ թուք յերես առնլոյ, եւ փշեղէն պսակի, հանդերձ այլովք եւս մեծամեծաւքն. դա եւ ջուր անգամ սրսկել ընդ երեսս թալկացելոյ վիրաւորի⁸ ոչ իշխեաց՝ ի մարդկան երկիւղէ: 135 Առեալ լիաբուռն զդահեկանս ի Շամարտացի գթածէն, զգինս դարմանոց հիւանդաց՝ ի սապատս համբարէ, եւ զհիւանդս հանեալ ի պանդոկոյն՝ ընկենու արտաքս բազում անփութութեամբ: 136 Փրկիչն Քրիստոս բարձր կոչմամբ զամենայն ակր ինդրէ զմեղաւորս. *Եկայ՞ք առ իս, ամենայն աշխատեալք եւ վաստակեալք, եւ որք ունիք զբռնինս ծանունս, եւ ես հանգուցանեմ զձեզ⁹*. Եւ Պաւլոս զանյարական զարկումն զանյայտ դիպեցման յաշխարհիս՝ չէ եւս զլորելոցն զգուշացուցանէ, գրելով առ Գաղատացիսն. *Եղբարք, ասէ, եթէ յանկարծ ըմբռնեսցի որ ի ձէնջ յինչ եւ իցէ յանցանս՝ դուք որ հոգեւորք էք՝ հաստատեցէ՛ք զայնպիսին հոգով հեզութեան. զգոյշ լինիցիք անձանց, զի մի՛ եւ դուք փորձիցիք. զմիմեանց բռնն բարձէք, եւ այնպէս կատարեցէք զաւրէնսն Քրիստոսի¹⁰*: 137 Իսկ դա զնորին հակառակն աղաղակէ, թէ «Յո՞ գաս. չկամիմ, չիշխեմ տեսանել⁹»: 138 Արդեաւք տարա՞ւ զիս ի սենեակ միանգամ եւ երկիցս, եւ խաւսեցա՞ւ ընդ իս, որպէս հրամայէ Փրկիչն¹⁰, միայն ընդ միայն, եւ կամ միով եւ կամ երկու ընկերաւք, եւ գտեալ անհաւան, համարեալ իբրեւ զմեղաւոր եւ զմաքսաւոր՝ հալածէր:

1 ՁԿ. ասաց եւ պատգամաբերն... ողջ լեր: եւ այրն... Ատ. ուղղագրել է առ պատգամաբերն. Բգտ. ուղղագրել եւ առ պատգամաբերն... եւ այլն ոչ ինչ թեթեւ. այսպէս ըստ Յ. Տաշեանի

2 ՏՏ. ի տեսանել

3 Վ. զամ եւ բժշկեմ

4 Վ. չիք մի գուցէ զգացեալ ուրուք... զդժոխս ժառանգեցուցանէ (Թուղթ, 153)

5 ՁԱտ. որ աներկիւղութիւն. այսպէս ըստ Բգտ.

6 ՏՏ. արդար հայրապետի

7 ՁԱտ. արարիչն

8 ՁԱտ. վիրաւոր

9 Մատթ. ԺԱ 29

10 Գաղ. 2 1

9 ՏՏ. տեսանեմ

10 Ձ. հրամայէ արարիչն